



10 դեկտեմբերի 2013թ.

ՀՀ Ազգային ժողովի նախագահ  
պրն Հ. Աբրահամյանին

Հարգելի պարոն Աբրահամյան,

ՀՀ կառավարության ու ԷԱՀԿ գրասենյակի կողմից 2002 թվականից ի վեր Հայաստանում ստեղծվել են բնապահպանական տեղեկատվության՝ Օրինա կենտրոններ, որոնց նպատակն է տրամադրել հանրությանը շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվություն, աջակցել հանրության մասնակցությանը որոշումների կայացմանը:

Կենտրոններն իրենց գործունեությունը ծավալում են ՀՀ օրենսդրության, հիմնականում 1995թ. ընդունված «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» օրենքի շրջանակներում:

Վավերացնելով 2001թ-ն Օրինաի Կոնվենցիան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավորություն ստանձնեց համապատասխանեցնել ազգային օրենսդրությունը Կոնվենցիայի նորմերին:

Սակայն Կոնվենցիայի համապատասխանության կոմիտեի որոշումները վկայում են, որ ազգային օրենսդրությունը մինչ օրս չի համապատասխանեցվել վերոնշյալին:

Այս հարցը քննարկման է դրվելու 2014թ-ի հուլիսին՝ Կոնվենցիայի կողմերի հանդիպմանը, որը հանդիսանում է բարձրագույն մարմինը

[http://www.waoc.org/fileadmin/DAM/central/iaoc/4/Documentos/Extracto/Decision\\_IV-a\\_Compliance\\_by\\_Armenia\\_e.pdf](http://www.waoc.org/fileadmin/DAM/central/iaoc/4/Documentos/Extracto/Decision_IV-a_Compliance_by_Armenia_e.pdf)):

Ներկայումս Ազգային ժողովում է գտնվում «ՀՄԱԳՓ» օրենքի նոր նախագիծը, որը դարձյալ չի ներառել Կոնվենցիայի պահանջներից բխող ստորև նշված կետերը.

• Վերանայել որոշումների ընդունման գործընթացների հասարակության մասնակցության մեխանիզմները՝ սահմանելով համապատասխան ընթացակարգեր և ապահովելով շահագրգիռ հասարակայնության իրական մասնակցությունը այդ գործընթացին,

• սահմանել պատասխանատվության մեխանիզմներ՝ ստանց հասարակայնության ներգրավման որոշումների ընդունման դեպքերում կամ խտտացնել արդեն գոյություն ունեցողները,

• կատարելագործել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձարհնության ընթացակարգը, օրենքով սահմանել անկախ հասարակական փորձարհնություն իրականացնելու հնարավորությունը,





• իրավական փաստաթղթերով երաշխավորել ազդակիր համայնքի դիրքորոշման որոշիչ լինելը:












Օրինու կենտրոնների համակարգողներս, խիստ մտահոգ ենք ստեղծված իրավիճակով և մեր պատրաստակամությունն ենք հայտնում, էլիելով Օրինուի Կոնվենցիայի դրույթներից ու ժողովրդավարական սկզբունքներից, համատեղ ուժերով, հասարակական երկխոսության և համագործակցության ճանապարհով գտնել խելամիտ լուծումներ և հասնել իրավիճակի բարելավման:

Հուսով ենք, որ մեր համագործակցությունը, հասարակական երկխոսության նոր մակարդակի ձևավորումը, օրենսդրական խելամիտ բարեփոխումները և դրանց կիրարկման համար համապատասխան մասնակցային մեխանիզմների ձևավորումը հնարավոր կդարձնի դրական դեղաչարժեր ապահովել բնապահպանակն կառավարման ոլորտում և կանխել Հայաստանի ստանց այդ էլ խոցելի կենսահամակարգերի ուղեկացումը, բնական ռեսուրսների գերշահագործումը և շրջակա միջավայրի բաղադրիչների աղտոտումը:

Մենք պատրաստ ենք, ձեզ հարմար ժամանակ, հանդիպում կազմակերպել շահագրգիռ բոլոր կողմերի ներգրավմամբ՝ ստեղծված իրավիճակի քննարկման և լուծման ճանապարհներ գտնելու ակնկալիքներով:

Կանխավ շնորհակալություն:

1.	Հարատանի Օրինու կենտրոնների տեղեկատվության պատասխանատու Մարի Զարբյան	
2.	Ազավերդու Օրինու կենտրոնի Անուշ Էմոյան	
3.	Ազարանի Օրինու կենտրոնի Նատալի Մանուկյան	
4.	Արարատի Օրինու կենտրոնի Զոհիբախն Սարգսյան	

5.	Պալատի Օրհուս կենտրոն Լիանա Ասոյան Մարինե Մազմանյան	
6.	Գյուլբիթի Օրհուս կենտրոն Վարդ Պետրոսյան	
7.	Գորիսի Օրհուս կենտրոն Նվեր Պողոսյան	
8.	Դիլիջանի Օրհուս կենտրոն Ալբերտ Հարություն	
9.	Եղեգնաձորի Օրհուս կենտրոն Նարեկ Քեզարյան	
10.	Եղվարդի Օրհուս կենտրոն Ռուզաննա Մանյան	
11.	Երևանի Օրհուս կենտրոն Միլլա Ավագյան	
12.	Բջևանի Օրհուս կենտրոն Դավիթ Ղազարյան	
13.	Գապանի Օրհուս կենտրոն Աշոտ Ավագյան	
14.	Հրազդանի Օրհուս կենտրոն Անահիտ Մնացականյան Ժորա Առաքելյան	
15.	Մտեփանուվանի Օրհուս կենտրոն Մանրա Մելիքջանյան	
16.	Վանաձորի Օրհուս կենտրոն Պերճ Բոջակյան	